


Սմբատ Բուրատ
 Խմբագրութիւն «Փիիւնիկ»,
 Ալեքսանդրիա



S. Burat
 Rédaction «PUNIG»
 Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ
 Լր.՝
 ՏԱՐԵԿԱՆ... 45
 ՎԵՏԱՄՍԵՍՑ 25
 —
 ԲԱԺՆԵԳԻՆԸ
 ԿԱՆՆՈՒԿ Է

ՓԻԻՆԻԿ

ԱՐՏԱՍԱԶՄԱՆ
 Ֆր.՝
 ՏԱՐԵԿԱՆ... 15
 ՎԵՏԱՄՍԵՍՑ 8
 —
 ԿՈՎԿԱՍ
 ՏՅՆԵԿԱՆ ԲԱՂ. 6



ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՉԵՈՒՔԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՄԷԿ ՂՐՈՒՇ ՌԴՋ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1901

ԹԻԻ 22

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻՆ

Tu vas recevoir dans la mort!
 Պիտի մահուան մեջ վերկենյալի՛ս դուն.
 (ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ)

Դո՛ւն, այո՛, դո՛ւն, Ազատորդի՛,
 Թերափե՛ եղար ամեն սրտի.
 Կ'ապրիս, քանի՛ դարեր գրորին
 Գլխե՛ն մեր ծեր մոլորակին.


Ու պաղ շունչը Գերեզմանին
 — Վարդ կեանքերու այս հունանին —
 Չե՛, չե՛ կարող մարե՛լ ջանք
 Հուր հանձարիդ ծաղրո՛ղ մանք:

Հանձա՛ր հրաշե՛կ այն Երկաթին
 Ճախրող, գրկո՛ղը Ծիր Կարին.
 Խորասուզու՛ղն այլը Վիկին,
 Վեհը, Տրտու՛նն ու Ամենին...:

Բովանդակին ծոցին, վերե՛ն
 Նայե՛՛ վարք, սե՛ս, կ'աւերե՛ն.
 Կը քաւայե՛ն արիւն՛ գետեր,
 Խօսե՛, ե՛րբ մեզ կը ջիշե՛ ծեր:

Խորհրդակի՛ջն եղար ծախին
 Մայր - Հայրենեաց ուր սակաւին՝
 Վերե՛կն արբշի՛ն՝ կը գուարանայ.
 Վաղուան Ա՛յրը կ'երազե՛ նայ...:

Օ՛, մե՛ծ Երազը կ'իրանայ.
 Հրճուե՛, հոգի՛ վե՛հ Տիգրանայ.



(ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ)

Տե՛ս, Հայուրիւնը բովանդակ՝
 Ի՛նչպէս պաշտե՛ քու Յիշատակ:
 Աղեֆ. 10 Հոկտ. 1901 Ա. ԲԻԻՐԱՏ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ

ՆԱԽԱԲԱՆ



Կանուխ, շատ կանուխ անհետա-
ցաւ այս Դէմքը, չքնաղազեղը դէմ-
քերէն, որ միջոցը լեցուց ու ողողեց
իր բուրումնաւէտ շողշողումովը. յա-
ւիտենապէս քաշուեցաւ մեր ազգա-
յին — գրական — քաղաքական երբեակ
կեանքի հոշիղոնէն, թափուր թողլով
ասպարէզը, որո ն պայծառագոյն աւտ-
ղերէն մին եղաւ: Ու այդ Դէմքն է որ
այսօր, միշտ վճիտ ու պաշտեցեալ, միշտ
ներկայ, երբէ՛ք անլնջելի, կը վերե-
րելի հայ Դատին հոգեբանական այս
փուլին մէջ, կարծես ազգարարելու թէ՛
անմահութիւնը ժառանգած է ինք.
մահուան սառոյցն ու գերեզմանին
դանդիւռ ծաղրող, թափանցող նայ-
ուածքը յառած՝ դէպ ՚ի մեզ՝ կ'ապրի,
կը շնչէ, չլերնճիւզ կեանքի մը հո-
սանքը կը ներարկէ թմրած երակնե-
րու մէջ, բերելով ներշնչումներ ու սա-
ւառնումներ հոն ուր մարած լոյսեր
կան, ու մեռած յոյսեր:

Այս Դէմքն է ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԸ.
Բարիին, Գեղեցկին, Կատարեալին ու
ճշմարտին ճառագաթումը կազդու-
րիչ. Յաւին ու ցաւերու երկրին Մար-
գը, Անճանօթին ծանօթ Ձեւը, Աւի-
նին ու Խանդին շօշափելի մարմինը
առած. բարձր, շատ բարձր՝ նիւթէն,
որուն դէմ ուխտուած Որս մ'եղաւ իր
կեանքը բովանդակ. անմերձ ու զերծ՝
ա՛հն բանէ որ մարդ էակին մէջ կոյր
բնազդը կ'արթնցնէ ու ախտազանդ
խմորը կը յատկանշէ:


Լոյսին մէկ զաւակը, Բանին հրա-
ւիրակը, սաւառնող հանճար, թա-
փանցիկ հոգի, դատող միտք, կորովի
կամք, տոկուն մարտիրոս, սիրող սիրտ,

համադրած Առաքեալ ազատութեան,
անխնջ մարտիկ. ահա՛ Տիգրան Երկա-
թը: Ազատածին ծագում, անխախտ
սկզբունք, անհուն հատնում, յամառ
մաքառում, ժպտուն այգեր, պմպոտ
առաւօտներ ու նուաղուն վերջալճոյս
մը. ահա՛ կեանքն անոր՝ որ Տիգրան
Երկաթն եղաւ:


Կորուստը դառն է ու սուգը՝ մեծ
ու մշտատե. չը փակուիչ մնար ամ-
փոփ ու անձուկ ընտանեկան շրջանա-
կին մէջ. սուգի լայն բաժինը կը մնայ
Ազգին, նահատակ Ազգին, որուն ա-
զատութեանը համար հսկեց անի քա-
նի՛ քանի անլոյս գիշերներ: Տօրոսի
մուշուկն ողբերուն հետ թո՛ղ խառնուին
Ձահանի ու Արաքսի փրփրուտ ալիք-
ն'երը, կոծելու համար կորուստը վա-
զամեռիկ բանաստեղծին, զոր լացին
պառաւ Երոպան ու հարս Ամերիկան:
Իսկ Ելլադա, Երկաթի մտատիպարին
հաճոյագոյն հայրենիքը, լացաւ իր
հելլենապաշտ Ձուակը, լացաւ ու կու-
լայ դեռ, և պիտի լայ թերեւ ցորչափ
ալիքները Միջերկրականին՝ թանան
ազատ Յունաստանին ծիծաղկոտ ծովա-
փունքը:

Մենք այս կեանքը — նահատա-
կութեան շղթայ մը — պիտի բաժ-
նենք չորս մասերու. վեր հանելու
համար իսկական ու բուն Տիգրան Եր-
կաթը, նախ՝ իրեն ու իր ընտանեաց
հետ. երկրորդ՝ Մայր Բնութեան հետ.
երրորդ՝ իբրև Հայ՝ Հայրենիքին հան-
դէպ. չորրորդ՝ իբրև Մարդ՝ Մարդ-
կութեան մէջ:

Ս. ԲԻԻՐԱՏ



ԽԱՉԻ ՃԱՌԸ



Ի՞նչ աղուր, ի՞նչ խոռո, ի՞նչ խո-
րուն, ի՞նչ վսեմ, ի՞նչ խորհրդաւոր
վերնագիր՝ այս *Խաչի ճառը*, որ սա-
կայն՝ ո՛չ «*Քառաթելին վրայ*»ն է, գոր 15
դարեր առաջ Աթէնքի մէջ արժասանած
է մեր Դաւիթ Անյաղթը, եւ ո՛չ ալ
Հայոց Հայրիկին՝ այն ոսկեղէն, այն
ժէն ու բոլոր շրջանին բուսնող ապրող
կրօնասէր ու երջանիկ սերնդին համար
յօրինած *Խաչի ճառը*։ Ասի՛ նոր Ս. Դա-
ւիթի մը քանդակած ու դրուագած քա-
րոզն է, տեղիս Ս. Պօղոս Պետրոսի բե-
մէն, մեր անառակ Եգիպտոսին առա-
կաբան Առաջնորդին Սրբազան բերնէն
հոսած, մեղրածորան շրթունքէն քափ-
քրփած, հարաւէն հիւսիս, արեւմուտէն
արեւելք արեւաակի անդաւանող կաղ
ու շեղ ակնարկութիւններու շարք մը.
պատարագին երկնաւորութեան հով՝
այնչափ ահռելիօրէն երկրաւոր ու
ողորմելի, *Նազարի* գալու չափ գէր
ու ուռցիկ, դեռ ի՞նչ ըսեմ, ի՞նչ պէս
բացատրեմ, ի՞նչ տեսակ փափկանկաս
ու խնայողիկ ոն գործածեմ չը խոցո-
տելու դիւրագգած ակնանջները, չը ջլա-
ձգելու խնկապատ զգայարանները, չը
գերագրգռելու դիւրաբորբոք. . . . ըղեղ-
ները, ու պէ՛տք է արդեօք ըսել, չը
կասողեցնել ո՛ւ ՓԱՐՈՍը մերժողին տի-
պարէն ազգասէրները. . . . :

Եւ սակայն քարո՞ղ էր քարոզը, ու
կարծէ անոր ընծայել արժանի ներ-
բողեան մը։

Չուտ կրօնային կարեւոր մասերն
այլ քարոզի բաղադրութեան՝ մէկդի,
ջանամք կարճատօտել, որչափ որ հնար
է, սեղմ ու նեղ, տափակ ու վնասա-
բեր այն գաղափարները, որոնք հաւա-
տալի չը գար թէ՛ սպրդած մտած ըլլա-
լին ըղեղամանին մէկ խցիկը բարձ-
րակարգ եկեղեցականի մը, գոր գոնէ

Ս. Ղազարի օղբ ծծելու բաղդին հան-
դիպող մեծաշնորհեալ կղերներէն մէկը
կարծելու չափ պարզութեամբ ապ-
րած էինք մինչեւ այն վայրկեանն ուր,
մեր դժբաղդ ակնանջները զարկին, սալը
ծեծեցին, մաշկը ծակեցին անցան ու
ըղեղին խորը բանեցան այն չ'ըլլալիք
քարոզին չը լսուած բորբոսած քա-
ւերը. . . . :

Մենք պիտի գծենք «*Խաչի ճառը*»ին
մունջ քարտէսը, յանձնարարելով պակ-
սածները լեցնելու մեր բարեպատեցիկ
եղբայրներուն, որոնք խաչվեացի կի-
րակին եկեղեցի գտնուեցան։

Նախ՝ ձեռուած աւուր պատշաճի
ներբողեան մը Ս. Խաչին Խորհուրդը,
Կենաց փայտին յանկերգը, Կոստանդինը,
Երուսաղէմը, Խաչին երեսումը, եւն եւն,
պատմեց աստուածաբանի հովերով ու
հարստանի մը հոռոմաբանութեամբ.
ու այս կեանքին մէջ, ամեն քրիստոնէի
ուսին վրայ խաչին անխուսափելի եւ
անհրաժեշտ բեռը շեշտել յետոյ, կար-
ծես թէ՛ ծանրութեան կեղտոնը կորսն-
ցնող բանի մը պէս քարոզը փլաւ ին-
կաւ մեր խեղճ Աղեփաւանդիոյ ծանօթ
ազգային խնդրին վրայ. հոս, Գեր. Քա-
րոզիչը՝ խղճահար խոստովանողի մը
հոգեբանութիւնը մասնեց իր վրայ։

«Այս խնդիրներուն վրայ շատ չ'պի-
տի խօսիմ, ըստ, որովհետեւ խօսած-
ներս հրապարակի վրայ կը վիճաբան-
ուին, լրագիրներու մէջ կ'անցնին, կը
խեղաթիրուին։ Առաջնորդը սանկ
ըստ, առաջնորդը նանկ ըստ, սոս
տեղեկութիւններ, ժողովուրդին միտքը
կը պիտոտեն։ Առաջնորդը այս կամ
այն կուսակցութեան մարդը չէ՛. չէ-
զոք է. ժողովուրդին մէջ պառակտում կայ,
չ'վայելեր. աւ ի՞նչ ամօք, ի՞նչ յուսա-
խաբութիւն է. . . . :

Տանկաստանի մէջ ուր մեր կեանքը
դիրքը վտանգի մէջ, խօսքի գործի ա-
զատութիւն չը կար, ստելի հաշտ, մի-
տքան էինք. մինչդեռ արժասանանի

մէջ, ուր ամեն ազատութիւն կը վայելեն, փոխանակ հասց ըլլալու, գիրար կը բզկենն, իրարու միս կուտենն. անուանարկիչ յարձակումներ իրարու դէմ, օտարին աչքին հայ ազգին պատար կոտորելու չափ: Ամերիկա այսպէս, Պուկարիա այսպէս, Բարիզ այսպէս, Եգիպտոս ալ այսպէս աս ինչ բան է:

Ժողովուրդը լրագիրը կը կարդայ, զուր տեղը իր դրամը կուտայ, լրագիր կը գնէ, մինչդեռ լրագիրը սուս լուրեր կը հրատարակէ. օրինակ, իբր թէ եւրոպական Տերութիւնները հայկական խնդրին առթիւ պիտի միջամտեն եղեր. մեզ պիտի ազատեն եղեր: Սո՛ւս է, բոլորն ալ սուս, երեսակայական բաներ խեղճ ժողովուրդը կը խաբուի, ի զուր դրամը կը վասնէ ասանկ լրագիր անելու համար. մե՛ղք է, մե՛ղք ձեր դրամին. պէ՛տք է՝ խաբուիք, բարձր եղի՛ք դուք. արհամարհեցէ՛ք զանոնք. սուս են, բան մը պիտի չ'ըլլայ (1): Եւրոպան չ'միջամտեր, անիկա լոկ իր շահուն համար մեզի համակրութիւն ցոյց կուտայ, բան մը պիտի չ'ընէ. ինչպէս որ 300,000 զոհերէն յետոյ բան մը չ'ըրաւ. մեր յայտ անոնց վրայ չը դնենք. խաչի՛ն փառինք, ամեն օգնութիւն անկէ՛ յուսանք Մեր նախնիքները նեղութեան աստի՛ճ Ս. Խաչին կը դիմէին, կը փառէին, իրենց մեղքերուն համար կ'ապաշխարէին ու Ս. Խաչը զանոնք կ'ազատէր իրենց ձախորդութիւններէն: Առանց միութեան Խաչը մեզի չ'օգնէր. միութիւն կա՛յ, Խաչն ալ մեզի կ'օգնէ, միութիւն չըկա՛յ, Խաչն ալ մեզի չ'օգնէր...: Պողոս Առաքեալը շատ տեղեր պստեցաւ ծեծ կերաւ, բայց միայն Խաչով պարծեցաւ. ոմանց պէս չ'ըսաւ թէ ես այն ինչ տեղ

(1) Մրբաշան Գարոյիչը՝ զոնէ Եւրոպայիկն անտարբերութեանդէ՛լ ցոյց տար մեր ներքին ուժերուն անխորհուրդին ու յեղափոխութեան պէ՛տքը, փոխանակ յուսանալէ ցնեղու ժողովուրդը:

զացի, այն ինչ նեղութիւնը կրեցի, բանտարկուեցայ եւն»:

Հոս էիք մը կանգ առաւ, անիրաւ խղիայթէն տանջուողի մը գոյն առաւ, ձ'ոքի մականը պիտի բռնած, անգամ մ'ալ, գողունի նայուածով մ'ընդգրկեց տանարին մէջի գլուխները, ու յետոյ, յանկարծ, բարձրացոց ձայնը որ դարձեալ, հակառակ ալեգարդ պերճախօսին նիգերուն, դժուար լսելի կըլլար ամբոթին յետին տողերը գրաւողներուն:

«Աս ի՞նչ է, ազգ իշխանութիւն, Առաջնորդ, կը քննադատուին, անվայել յարձակումներ, անձնականութեան դպչիլ, ի՞նչ է, ... օրէ՛նքը պիտի գործադրուի՛ եղեր... բայց օրէ՛նքը գործադրելու համար այդ միջոցները չ'են գործածուիր: Օրէ՛նք կ'ըսեն, մինչդեռ ուրիշ բան չը տեսնուիր, բայց միայն կիրք, ետութիւն, փառասիրութիւն, ասելութիւն, անուանարկիչ հրատարակութիւններ. մինչեւ անգամ կիներու անունները մէջ կը խառնուին կոր. այսպիսի միջոցներով է որ օրէ՛նքը պիտի գործադրուի...»

Հանրագիր կը պարտաւորեն, ժողովուրդը կը շուարի, հո՛ւս տարագրէ, հո՛ն տարագրէ. կ'ելլայ հո՛ւս ալ կ'տարագրէ, հո՛ն ալ: Օրէ՛նքի գործադրութիւնը աղէկ բան է, մե՛նք ալ չ'ուզենք, բայց օրէ՛նքը մէկ օրուան մէջ չը գործադրուիր, օրէ՛նքը զանալէժ կերպով չը գործադրուիր, ժամանակի կը կարօտի: Բայց օրէ՛նքը գործադրելու (2) համար պէ՛տք է նախ ժողովուրդը հանդարտի, խոռովութիւնները դադրին. առանց այս պայմանին՝ օրէ՛նք չը պիտի գործադրուի:

(2) Ըսել է Մրբ. Առաջնորդն իսկ իր նշանակութեան թէ օրէ՛նքը չը գործադրուիր հոս, Սահմանադրութիւնը բռնաբարուած է. Ժողովուրդը չը հանդարտի, հետեւաբար պաշարման վիճակ կը հրատարակուի:

Ո՞ր են անոնք, ո՞ր են օրէ՛նք օրէ՛նք պողոտաները. ո՞ր են, ինչո՞ւ եկեղեցի չ'են գար ասանկ սօնական սաղաարի օրեր, ինչո՞ւ մեջեղ չ'են երեսուր: Ո՞ր են ժողովուրդին պատշապան կանգնող մեծամեծները, ինչո՞ւ եկեղեցի չ'են գար...: Միութիւն կայ, օրէնք կայ, միութիւն չ'կայ՝ օրէնք չ'կայ. միութիւն կայ, խաչը մեզի կ'օգնէ. միութիւն չ'կայ, խաչը մեզի չ'օգնէ:»

Դպրոցին վրայ պատշապանեցաւ իսուելու, բայց, լեռոյ. «բան մը չ'մըսեք, ի՞նչ ալ ըսեմ, պիտի ֆենադասուիմ, ուրեմն լուռ կ'անցնիմ, միայն սա ըսեմ որ խիս բարեկարգ վիճակ մը պիտի ունենայ. իմ նախազանութեանս ակամենակատարեալ ծրագիր մը պատշապանած է. պիտի տեսնէ՛ք, անա՛ կ'ըսեմ. պատուեցեալ ամեն կիրակի աղջիկ ու մանչ եկեղեցի պիտի գան. եթէ չը տեսնաք զանոնք, բողոքեցէ՛ք, իրաւունքն ի՞նչ է:»

Վերջապէս, Սրբազան ֆարոգիչը մէջէն ելաւ ֆարոգին, որ խաչով ս'լսաւ ու վերջացաւ խաչով:

Լրագիր կարդացողները, որոնց մեծագոյն մասը գրեթէ զրկուած են այս ֆարոգէն — պէ՛տ է հիմայ գոհ մընան լրագիր կարդալու իրենց անձնութեան համար. եթէ լրագիրը չ'ըլլար, ու իրենք ալ, իրենց բարի ու անյեղի սովորութեանը համեմատ, եթէ շարունակէին չը յանախել եկեղեցին, ի՞նչ միջոցով պիտի արժանանային «խաչի նաոր» նարակելու բաղդին...:


Սրբազան բեմբասացը՝ Ս. Խարանէն, Ս. Խաչի սէրը ֆարոգելու առիթով՝ իսուր փորձութիւնն ունեցաւ իր նուագնելու ոչխարամիտ ամբողջ. սակայն, Միջին Դարուն հոգեհանգիստը սամեակ մը դարեւ կարգացած են արդէն, ու մեր ծերանագարը Սրբազանին նման ֆանի՛ ֆանի՛ պէտէր գլուխներ այդ դարերու մարակոյտին ակըր բաղուած, հողացած են. անցա՛ն այն,

դժոխքին որ դրախտին ծիծաղելի առուսուրի դարերը. մարեցան հասարակնութեան խարոյկները, ու հիմայ, ուրիշ դար ունինք, ուրիշ բարեք եւ ուրիշ հասարակ, ուրիշ պէ՛տեք եւ ուրիշ պահանջներ:

Ներկայ դարուս խաչը՝ Քրիստոսն է. Տանարը՝ Թատրոնը, Դպրոցը, Մամուլը՝ Թողութի՛ւն, Սրբազան ֆարոգիչ, թողութի՛ւն, քիչ մ'անելի երկիրաժութեամբ մօտեցէ՛ք Մամուլին, որուն կը պարտին այսօր Մարդկութիւնն՝ իր իրաւունքները. Կրօնին՝ իր տեղը, Հայրենիքին՝ իր ազատութիւնը:

(Շարունակելի)

ԱՆՊԱՏԿԱՌ ԻՄԱՍՏԱԿՈՒԹԵԱՆ,
ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՅԸ



(Շար. ԻԱ. քիւէն է. վերջ)

Կը մնայ թաղ. Խորհրդի՛ առժամեայ հանգանակին. Տ. Մկրտիչեանի կողմէ տրուած բացատրութի՛ւնը. այստե՛ղ է որ յօդուածագիրը իմաստակութեան ամենաբարձր աստիճանին կը հասնի. կարժէ որ ամբողջութեամբ մէջ բերենք «Բասնետրոյց դարու այս իմաստակ իմաստասէրին» այդ ամենանշանաւոր տողերը որոնք անպակաս ինասակութեան գլուխ գործոցը մնալու սահմանուած են:

«Գալով թաղ. Խորհրդի՛ առժամեայ հանգանակին... ձեր ամենէն խախուտ զէնքն է այդ: Թաղ. Խորհրդը իր վերոյիշեալ նամակին մէջ չի յայտարարեր թէ օրենքն իմաստակեայ է ինքը. (գիտէ՞ք ի՞նչու, ո՞վ Պարոն պաշտպան թաղ. Խորհրդի վասնի խորհուրդը օրենքն իմաստակեայ է, այլ փաշայական կա՛նքն. օրենքն չկազմուող մարմին մը օրենքն իմաստակեայ չի կրնար ըլլալ: Չե՛մ գիտեր

միջթարուիլ. ազգը հարկաւորաւոյն
երկու օրէնգոստ անձերու խնամակա-
լութեան տակ գտնուելու անհախաճելի
վիճակէն պ'տի ազատուի: — Ահա այս
պատճառներով է որ Թաղ. Խորհուրդը
իր աշտ կամքով առժամեայ հանգա-
մանք տուած է ինքզինքին: «Բայց,
լաւ ըմբռնեցէք, տարբեր բան է կա-
մույթն ինքզինքին առժամեայ հանգա-
մանք տալ, տարբեր բան է օրէնքով
առժամեայ ըլլալ. Թաղ. Խորհուրդը
օրէնքով առժամեայ հանգամանք չու-
նի, այլ լոկ կամովին»: Թաղ. Խոր-
հուրդը օրէնքով ԳՈՅՈՒԹԻՒՆ ԱԼ ՉՈՒ-
ՆԻ, եթէ ակնարկուած օրէնքը ԱԶԳԱ-
ՅԻՆ ՍՍՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆՆ Է:

Մեզի համար Թաղ. Խորհրդին առ-
ժամեայ հանգամանքը մեղմացուցիչ
պարագայ մ'է անոր հակառակ նախ-
որական կազմութեանը. իսկ Տ. Մկրտ-
տիչեան, Թաղ. Խորհրդին փաստաբանը,
այդ Խորհրդին բացարոյշ յայտարարու-
թիւններուն և խոստովանութիւններուն
ալ հակառակ՝ կը ջանայ այդ մեղմա-
ցուցիչ պարագայէն ալ զրկել կատար-
ուած ապօրինութիւնը՝ երբ կը բացա-
ղանչէ. Ուրեմն Թաղ. Խորհուրդը լի-
ովին կըմբռնէ թէ օրինապէս իր պաշ-
տօնը առժամեայ հանգաւանք չունի:

* *

Վերջացնելով յօդուածիս երկ-
րորդ մասն ալ կամփոփեմ այսպէս.

Հակառակ Տ. Մկրտիչեանի իմաս-
տակ պատճառաբանութեանց և խեղա-
թիւրումներուն, կատարելուպէս և վերջ-
նականապէս հաստատուած և լուսա-
բանուած կը մնայ թէ.

1. 1899ին ժողովրդի քուէներով
ընտրուած Թաղ. Խորհուրդը լուծ-
ուած է:
2. Հիմակուան Թաղ. Խորհուրդը
անոր շարունակութիւնը չկրնար հա-
մարուիլ, այլ նոր մարմին մը:
3. Հիմակուան Թաղ. Խորհուրդը

ժողովրդէն ընտրուած չէ, այլ Վսեմ.
Պօղոս Փաշայէն:

4. Արդի Թաղ. Խորհրդի այս
կազմութիւնն հակառակ նախորա-
կան է:


5. Արդի Թաղ. Խորհրդին պաշ-
տօնն առժամանակեայ է:

6. Վսեմ. Պօղոս Փաշային վերա-
գրուած Մշտական Ասեմապետքիւնը
կամ միւթեվեյլիտքիւնը Սահմանա-
դրութեան թէ՛ տառին հակառակ է
և թէ՛ ոգիին:


Ազեքսանդրիոյ այս բացառիկ
դիրքը թէև ուրիշ խիստ կարևոր տե-
սակէտով մ'ալ Սահմանադրութեան
հակառակ է, բայց այդ կէտին լուսա-
բանութիւնը թողլով ուրիշ յօդուածի
մը, առ այժմ միայն վերոգրեալ վեց
կէտերու վրայ հիմնուելով՝ իբր անվի-
ճելի իրողութիւն բացարձակապէս
կրնանք յայտարարել թէ.

ՍՍՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԲՈՒՆԱԲԱՐ-
ՈՒԱԾ Է ԱՂԵՔՍԱՆԻՐԻՈՅ ՄԷՁ:

ՄԻՀՐԱՆ ՏԱՄՍԵԱՆ



ՔՐՈՆԻԿ



— ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՅԸ. — Լաւա-
տեղեակ շրջանակներուն մէջ կը կար-
ծուի թէ՛ Արևելեան հարցը վիճա-
բանուեցաւ տեսակցութեանց մէջ, զոր
Չարն ունեցաւ Գայլէրին ու Մ. Լու-
պէի հետ և թէ՛ համաձայնութիւն մը
կայ Անգլիոյ թաղաւորին հետ, որ
սրտանց կ'ատէ Թուրքերը: Կը պատ-
րաստուի, կ'ըսեն, զինակցութիւն մը
Սուլթանին գէմ, և Ռուսիան, որ
կ'առաջադրէր ինք նախաձեռնել Մա-
կեդոնական խնդրին լուծումը, հիմակ
աւելի արմատական լուծում մը կը
փնտռէ Արևելեան Հարցին:

— Հայաստանի մէջ. — Կ. Պոլսէն ներկայ 6 թուականով Հովասի հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ Ռուսիան Իրան լաւ շուշուղու թիւեր կը հրաւիրէ Հայաստանի կացութեան վերայ:

— Սուրբանն ու Պաղեսիներ. — Սուլթանը նորէն արգելած է հրէաներուն՝ 3 ամիսէն աւելի մնալ Պաղեսիին:

— ՌԻՂԵՐՁԸ. — ԼՆՐՄԵՆԻԿԷՆ կը թարգմանենք հռչակաւոր ողերձը, զոր բարիզարնակ Հայերը մատուցին վերջերս Վեհ. Զարին ՚ի Գօնքիէներ: Այս ողերձէն մէկ օրինակ հաղորդեցին Ռուսիոյ Արտ. Գործ. Նախարար Կոմս Լամարգորֆի, եւ Մ. Մարգոֆի ձեռքով ուրիշ օրինակ մ'ալ Բարիզի ռուսական դեսպան իշխան Աւուսօֆի:

ԱՌ

Ն. Կ. ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ

ՆԻԿՈՒԱ Բ. ՉԱՐ

ԿԱՅՐ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՄՍՅ

ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՅ ԼՆ, ԼՆ, ԼՆ.

Վեհ. Տէ՛ր,

Այն պահուն որ Շրանսական արի Ազգը Ձեր Օգոս. Անձին մէջ կ'ողջունէ աննենգ Բարեկամն ու հզօր Դաւնակիցը, բո՛ղ Ձերդ Կ. Վեհափառութիւն թոյլ տայ Ֆրանսա հաստատած Հայերու խառնել իրենց ձայները ցնձութեան ընդհ. երգակցութեան, յարգանքով ողջունելու համար Արեւելքի քրիստոնէից Մեծահոգի Պաշտպանը:

Մենք, Թրեհայիս, Ֆրանսայի այս գեղեցիկ ու հիւրաւէր երկիրը խաբուած, երախտագիտութեամբ համակուած ենք դէպ 'ք Ձեր Կ. Վեհափառութեան լուսամիտ կառավարութիւնը, զի չ'ենք կրնար մոռնալ թէ՛ մեր կրօնակիցները,

ռուսական Կայսրութեան մէկ ծայրէն միւսը, կը վայելեն լիակատար ապահովութիւն կեանքի, պատուի ու ինչքի, եւ անթերի հաւասարութիւն իրենց միւս քաղաքացիաց հետ: Կը յիշենք նաեւ թէ՛ Ռոմանօճներու փառապանծ Տունը՝ Ռուսիոյ Հայերն իր պահապան ասպարին տակ առնելով չը շատացած՝ հանեցաւ սարածել իր անյարթելի բազուկը Թուրքիոյ Հայերուն վրայ իսկ, Սան Ստեփանօյի 16րդ յօդուածը ստեղծելով այս նկեռած քրիստոնէից պաշտպանութեան համար: Պիտի չ'մոռնանք երբէք թէ 40,000 Հայեր, ցաւաքին աղէտներուն հետեւանով ռուսական հողին վրայ ապաստանած, ապաւէն մը գտան մոսկովեան Արծիւին քերտուն տակ, եւ թէ՛ Ձեր Վեհափառութիւնը հանեցաւ սիրալիք ընդունելութիւն մը ընել մեր Եկեղեցւոյ Պետին, Նարին Սրբութեան էջմիածնի Կարողիկոսին, որ իր հօտին դասը կը պաշտպանէր Խաղաղութեան Առաքեալին եւ քրիստոնեայ Արեւելքի նակասագրին Եփեսոսի ինքն:

Ուրեմն կը մաղթենք երջանկութիւն Ձեր Կ. Վեհափառութեան եւ ամենայն Ռուսաց Շնորհափայլ Կայսրութեան այն առողջութիւն եւ երջանկութիւն, Ռոմանօճի հոյակապ Տան փառք ու զօրութիւն, եւ Սուրբ Ռուսիոյ մեծութիւն ու բարգաւաճում:

Պատկանելով, ինչպէս Ռուսերը, արիական ազնուական տոհմին. խօսելով լիքուանքի եւ սպասելիքի լեզուն. յարելով Հին Եկեղեցւոյ մը, որ հիւղ մ'է Օրթոսոքսին, Հայերս խանարհաբար կ'աղայենք Ձեր Կ. Վեհափառութեան բարեհանիլ շարունակելու Թուրքիոյ մեր տարաբախտ եղբայրներուն վրայ իր Բարձր հովանաւորութիւնն ու Ամենագօր Պաշտպանութիւնը:

Ապրի՛ Նիկոլա Բ. Չարը, Կայսր ամենայն Ռուսիոյ, Թագաւոր Հայոց.:

Հ. ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ԲԻՊՕՐԵՆՆ

ՄԻՆԱՍ ՉԵՐԱՉ

Բարիչ 20 Սեպտ. 1901

— ԱՂԵՐՍԱԳԻՐ ՄԸ. — Չարին Բարիզ այցելութեան ասեն Բարիզի Հայերը, 50 usրագրութեամբ աղերսագիր մը ներկայեցին Սեպտ. 16ին, Արսափին գործերու Նախարար Մ. Տէլգաւտի, պատգամաւորութեան մը ձեռնով, որոնցմէ մին էր Տ. Մ. Չեռագ: Այդ աղերսագիրը, զոր Ճրանսական *Հայրը Բարոյ, Օրոր* եւ ուրիշ լրագիրները հրատարակեցին, շ'Ար. Ենեթէն առնելով կը քարգմանեն ուրիշ լուրերու հետ:

Պարոն Նախարար,

Ճրանսա պիտի ընդունի հիմա իր հզօր ու սիրեցեալ դաւանակիցը, ամենայն՝ Ռուսաց կայսր:

Երկու մեծ ազգեր տօնի մէջ են: Կը յայտեն իրենց ցնծութիւնն անասման իսկոյնով առնութեամբ:

Ամեն ժամանակ ու ամեն երկրներու մէջ, արտաւած սովորոյթ մ'եղաւ դժբաղդները մասնակից ընել երջանիկներուն հրեւոյններուն:

Մենք, սարագիրներ մեր հայրենիքէն, Բարիզի մէջ ներկայացուցիչներ ազգի մը զոր Ճրանսան պարտ մ'ըրաւ պատգամել, կը համարակիմք Ձեր Վսեմութեան յիշեցնել տագնապալի կացութիւնը մեր հայրենակիցներուն ի թ'ուրփա:

Չարդերը, որ արդէն քանիցս կոտորեցին մեր եղբայրները, վերակաշար նախընթաց օրն են:

Արիւնը կը հոսի արդէն Հայաստան. եւ Մուշի ու Սասունի վերջին ջարդերը կ'ազդարարեն ահռելի ու անխուսափելի աղէտներ:

Ճրանսան, իր ցնծութեան միջոցին, պիտի չը լսէ՞ հոգեւարքի ու անյուսութեան աղաղակը՝ բնաջնջումով սպառնացուող ժողովուրդի մը:

Մեզի, հարսահարեալներու համար, Ճրանսա երկրորդ մայր մ'է:

Չարին մէկ շարժումով կ'ընայ մեզ ազատել:

Ճրանսական Հանրապետութեան Պ.

Նախագահն ու Դուր, Վսեմ. Տէր, պիտի չ'ստանա՞ք Նորին Կ. Վ. Նիկողայ Բ. Էն, Ձեր հիւրէն, խօսք մը, որ ամբողջ ժողովուրդի մը համար փրկութեան խօսքը պիտի ըլլար:

Ճրանսան, որ դեռ նոր ցոյց տուաւ թէ ինք գիտէ լսեցնել իր ձայնը Կ. Պոլիս, երկրորդական շահերու համար, ինքզինք պիտի լսելի ընել չը տա՞յ նաեւ մարդկային մեծ պարտականութիւն մը կատարելու համար:

Պարոն Նախարար, ի՞նչ ալ ըլլայ Ճրանգետութեան հանդէսներուն հետեւանք երկու երկրներուն քաղաքականութեան համար թէ՛ Ճրանսիոյ եւ թէ՛ Ռուսիոյ համար, գերագոյն պատիւ մը պիտի ստաջ գայ անկէ, եթէ հայկական ջարդերէն ապրողները վաղը տեսնէին ծագելը լաւագոյն ապագայի մը:

Պատիւն ունիմք ըլլալու, եւն.

ՄՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ

— ՅՐԱՆԱՍՆ ՈՒ ԵՒՐՈՊԱՆ Հայաստանի առջեւ. — Մեծ ջարդերէն ի վեր, զոր կը կանխամտածէր Ապտիլ-Համիտ իր գահակալութեան ստաջին օրէն, եւ զորս վերջապէս վնոեց հրամայել 1895ին, ամեն կուսակցութեանց Ճրանսացի գրագէտներ չ'են դադրած կառավարութեան յիշեցնելէ թէ՛ Ճրանսան դարաւոր պատգամաւորին էր Արեւելի քրիստոնէից, եւ թէ՛ ասեմն էր վերջ մը դնելու միասնական բարբարոսութեան:

Յիշեցե՛ք, կը գրէր օր մը Պ. Բօլքը Կասսանեակ, *յիշեցե՛ք Յռնասանը...*

«Հո՛ն ալ, պզտիկ ազգ մը կար ամենակարեւոր.

«Թորքը պիղծ է, ու վաղա՛ւջ պէտք էր Վրաստանի միւս կողմը նետել ինչ որ կը մնայ դեռ անկէ:

«Իսլամութիւնը կեղտ մ'է երոպայի համար:»

Օսմ. Կայսրութեան անհետացումով
եսահագրգռուող սերուփխնները, իրարու
նախանձոս, չը կրցին համաձայնիլ ի-
րարու հետ Փոքր-Ասիոյ մէջ ազդու
գործողութեան մը: Անոնցմէ մէկը,
Գերմանիան, կը թուի նոյն իսկ փաշա-
լերէլ Սուլթանն իր խաբէութեանց մէջ:

Ֆրանսան, ինք, պաղ կը մնայ,
կէս մ'անհարբէր: Ա՛խ, ա՛լ չ'ենք մենք
այն փառքի օրերուն մէջ, ուր մեր սու-
րը, կեփոքի մէջ ձգուած, զանի հակել
կուսար դէպ ՚ի զրկեալին կողմը: Հե-
ռո՛ւ ենք մենք իսպախիրներէն, *Լէրասե-
սեն, Սերասոքոյէն* իսկ: Չ'ենք յիշեր
մենք Լաճայէթներն ու Ռօսանյօցները:

Աս ի՛նչ հիւծում է մեզի սիրա-
ցեք որ կարելի եղած ըլլայ մեզի
հանդիսասես ըլլալ Հայաստանի փրի-
սոնէից խողխողումին, Յունաստանի
խեղդումին, Սպանիոյ ջախջախումին...:

Ե՞րբ ուրեմն Երոսպան պիտի որոշ
սիրապէս խօսիլ Ապս-Իլ-Համիթի.
*«այս փողոցիչը՝ պաշտօնի մէջ բռնող,
այս խայտառակ ու պիղծ վեհապետը
որուն ձեռքերն արիւնով կարմը-
րած են: Վաղուց, կը բարունակէ Պ.
Բօլ սը Կասանեակ, Երոսպան պարս էր
ոսքի մէկ հարուածով մ'ետեռին, որկեղ
յետին Թորքը Վուստրի խորքը, յը-
ւաջ երոսպական հոշն այդ կեղտէն որ
չաս երկար տեւց:*

*«Խաբէրային մահիկը, Ս. Սուրիոյ
զմբէթին վրայ, տեսական արաս մ'է
փրիսոնէութեան համար:*

*«Թո՛ղ անարգեն կա՛ն խոշանգեն
Սուրթանը, ո՛չ ոք աշխարհիս մէջ պիտի
զանգասի»:*


Քանի մը դեսպաններու երկչոս բո-
ղոքները չ'ըրին ամենադոյզն աղոթցու-
թիւնն Ապս-Իլ - Համիդի չարագործ
մտքին վրայ: Մահմէտական գառազի-
նէն այս վեհապետը, փարսիանց գոր-
ծին մէջ Ֆրանսան արհամարհելով ու
Սուրիոյ եւ կայսրութեան մնացեալ մա-
սին մէջ մեր լաթին կրօնաւորները կե-

ղեփելով չը բասանար, ու նորանոր ջար-
դեր կը հրամայէ Հայաստանի մէջ:
Սարսափը կը սրէ Վանի նահանգը.
Օսմ. իշխանութեանց կողմանէ դրդ-
ուած, Մուշի փաղաքին մէջ արիւնա-
հեղ կռիւ մը կը ծագի ու զոհերուն
արիւնը վրէ՛ժ կը գոչէ:


Ֆրանսացի՛ք, Անգլիացի՛ք, Գերմա-
նացի՛ք, Հունգարացի՛ք, Իսպալացի՛ք, յի-
շեցէ՛ք խմբովին Մահիկին դէմ կռուե-
լու մեկնող ձեր նախնի՛ք...: Յեշե-
ցէ՛ք իսպախիրներուն ասպետական
նախնիրները: Հայաստանի մեր եղբայր-
ները մեզ կը կանչեն, պէ՛տք չէ որ խուլ
մնանք անոնց աղեխաբ աղաղակնե-
րուն: Լուրջ կազմակերպութիւն մը
կուգայ հարկադրել կառավարութիւն-
ները վերջ մը դնելու կացութեան մը
որ իր նմանն ունեցած չէ եւ ոչ մէկ
ազգի արեգոց մէջ:

ՕԿԻՒՍՏ ՊԵՐՍԸ

ՀԱՅԱՍՏԱՆ



ԹՄՆԻ 29 Սեպտ. Ի խմբագրակա-
նին ազատ թարգմանաթիւնն է հե-
տևեալը.



Բ. Դուռը հիմայ կը խօստովանի
թէ՛ Հայաստանի նահանգներուն վի-
ճակը ծանրակշիռ է, զեկուցանելով
Տէրութեանց՝ Գննիչ Յանձնախումբնե-
րու կազմութիւնը, սակայն ասոր կա-
րևորութիւն ընծայելու համար միամիտ
ըլլալ պէտք է: Գիտենք թէ այդպիսի
քննութիւններ ի՛նչ կարժեն. ո՛չ միայն
ճշմարտութիւնը չ'են պարզեր անոնք,
այլ կը ծառայեն մտքերը մոլորեցնե-
լու և կեղծ գոհացումով մը խիղճը
քնայնելու: Արդէն 1895 ի կարծեցեալ
Յանձնախումբներուն պատմութիւնը հո՛ն
է, մեզ համոզելու համար թէ՛ անոնք

երչեմն աւելի՛ կը սաստկացնեն չարիքը:

Այս մտմտութիւններն ու բոլոր կասկածները կ'արդարանան մանաւանդ հիւսիս որ Սուլթանը մէկ կողմէ Եւրոպայի կը կեղծէ տալ իր ողջմտութեան հուսաւորքը, միւս կողմէ խիստ միջոցներ ձեռք կ'առնէ հեռացնելու, վտարելու ամեն անկախ վկայ Հայկական խումբութեանց թատերավայրէն: Մուշի Օսմ. իշխանութիւնները դժկամակեցան Վանի Ռուսական հիւպատոսը Մուշ մեցնելու, որ զրկուած էր ժողովուրդին վիճակը հասկնալու, սակայն Չարին պատուիրակը, հակառակ ամեն արգելքի, շատուր հետեորդներու ընկերակցութեամբ կրցաւ տեսնել մատովը շոյափել ու հասկնալ իրականութիւնը, զոր և հեռագրեց իր Կ. Պոլսոյ դեսպանին, 14 Սեպտ.ին, այս երկու բառով. գեշ կացութիւն: Միւսին զժկամակութիւնը ցոյց տուաւ Պիթիսի Վալին՝ արգիլելու համար ամերիկեան միսիօնարի մը պտոյտը, թէ և ի վերջոյ, տեղի տուաւ Միացեալ — Նահանգաց դեսպանին յատուկ ազդարարութեան վրայ:

Ուրեմն յայտնի է թէ՛ Երլարը Քէօշիկի մէջ մեծ խնամ կը տարուի քաղաքակիրթ աշխարհի աչքէն ծածուկ պահելու Հայաստանի մութ խորշերը: Ասի արդէն շատ բան կը պատմէ:

Այս կերպով ի յայտ կուգայ մըշտատանջ խղճի խայթ մը: Այս կերպով է որ Վեհապետ մը, — որ լաւ գիտէ թէ իր կայսրութեան մէջ ի՛նչ կ'անցնի կը դառնայ կամ կը պատրաստուի, որ չ'ըմբռնենք առաջին առնել կամ լրջօրէն զսպել նոր նոր դաւեր մարդուն ու մարդկութեան իրաւունքին դէմ, — կը ճգնի չնջել ամեն անգաղտնապահ ականասես:

Հայաստան ճամբորդելը դժուար եղաւ ամեն ատեն: Թող որ այս երկրին մէջ ճամբաներ չ'կան հաղորդակցու-

թեան, Թուրքիան նախանձոտ խնամով մը կը հսկէ իր սահմանագլուխներուն վրայ: Լորտ Բէրսի մը, շնորհիւ իր դիրքին ու ծնունդին, բրիտանական կառավարութեան յանձնարարութեանց ու իր մասնաւոր համակրանքներուն դէպ ի Թուրքն ու Քուրտը, իր առջև բաց գտաւ բոլոր պատուարներն ու իր գտած ասպնջականութենէն շատ գոհ մնաց: Լինջ մը, որ հնախոյզի, մարդաբանի, ու քաղաքագէտի հանգամանքով կրցաւ խորամխիլ այս դաւառներուն ներսերը, սակայն քանի՛ քանի՛ հետաքրքիրներ դուռը թողուած են, քանի՛ քանի՛ ճամբորդներու զլացուած է տալ իրենց անցագիրները:

Եւրոպան իր տգիտութեան մէջ փնտռած է ատեն մը մեղմացուցիչ պարագաներ իր անզգայութեան, անգործութեան ու կէս-մեղսակցութեան համար: Բայց հիմայ, ատենին ազդարարուած, չ'կրնար այսպիսի չքմեղանք մը փորձել: Ա՛լ հիմայ ամեն ինչ կ'աղդարարէ իրեն թէ՛ Հայաստան կը վերսկսի ըլլալ ծանրածանր դէպքերու թատերավայր մը:

Չկայ բան մը որ չ'հաստատէ այս ամենուն սպառնալից հանգամանքը, մինչև անգամ 8 վաշտերուն Մուշ առաքումը, որ կացութեան վրայ վտանգի նոր տարր մ'ալ կը բարդէ:

Հեռագրական գործակալութիւնները, մանաւանդ այն ատենէն ի վեր որ Հայաստանի շահերէն անհամեմատօրէն նուազ շահերէ ծնած հակառակութիւն մը՝ խզում առաջ բերաւ Փրանսայի ու Սուլթանին միջև, աչքերնին չորս բացին չարիքին ախտանիշներուն և իրարու կ'ուղղեն հեռագիրներ ուր ամբողջ ազգի մ'եղերական խուճապը կը ցցուի: Եւ սակայն այս տեղեկութիւնները դեռ շատ անկատար են, շատ անբաւական, ու թէեւ լաւ ալ թորուած չ'են: Տեղեկութեանց ուրիշ աղբիւրներ սակայն մօտ են մե-

զի: Նուիրական դատի մ'անվեհեր ա-
խոյեանները, Բրո Արմենիաի մէջ,
ա'յնքան նշանաւոր իր օրինակելի թըղ-
թակցութիւններով ու նկարչու և վա-
ւերական նամակներու քաղուած քովը.
Իրօշակի մէջ, քաջարի բերանը կու-
սակցութեան մը, որ գիտէ իր ուզածը
և գիտէ ուզել ու գործել, օրն օրին
մեզի բերին ճշգրիտ, դրական ման-
րամասնութիւններ Սասունի, Զեթունի,
վարակուած գաւառներուն խռովու-
թեանց վրայ: Այս պահուստն' է մէկ
նամակ անցընել կարելի է, շնորհիւ
Մուշի ու Նահանգին մէջ պաշարման
վիճակին հրատարակման:

Յունիսէն 'ի վեր նամակ առնել
տալը գրեթէ անկարելի դարձած է:
Յունիսէն 'ի վեր, լուրերը հատուկու-
տոր են, ու ամեն ենթադրութիւն,
ամեն կասկած ներելի է իրերու այս
վիճակին մէջ. ու փոթորիկներուն մօ-
տալուտ պայթումը կը գուշակուի այս
ահուելի աղջամուղջին մէջէն:

Ուրեմն դիւանագիտութեան վրայ
աւագ պարտականութիւն մը կը ծանրա-
նայ տեղեկանալ, փարատել խաւարը,
որոնք ոճիրը միայն կը նպաստաւորեն:
Արդէն բոլոր վրդովումի նշանները
կ'արգարանան Սեպտ. Յին Նըլտըզ Բէօշլի
քաջուած հեռագրին վրայ, որ տար-
տամ ու խորհրդաւոր բառերով կը
պատմէ Մուշի ջարդերը, որոնց իբրև
վերջաբան կը գնէ Շէրիֆ Ազա քուրտ
պէյին կարծեցեալ սպանման գործը:
Զորորդ զօրաբանակին գլուխը գըտ-
նուող, 1895ի գլխաւոր դահիճներէն
մին եղող Զէքի բաշա'ն պիտի հան-
դարտէ մտքերը:

Ճմարտութիւնն այն է թէ՛ աւելի
կամ նուազ կանխամտածուած գէպքե-
րէն դուրս ալ, որոնք ամեն վայրկեան
կրնան այս թշուառ նահանգներուն
մէջ շղթայազերծ ընել ջարդի ու կտու-
տի նոր կիկլոն մը, Հայաստանի կա-
ցութիւնը պիտի մնայ գերազանցօրէն

անկայուն ու աններելի, ցորչալի տէ-
րութիւնները վերջապէս ըմբռնած չըլ-
լան Պէրլինի դաշնադրին գործադրու-
թեան հարկը:


Միջազգային արդարութեան ատ-
եանը, ահագին տաղնապէ մը վերջ,
թեթեօրէն չէ որ բանաձևեց այս ըն-
դարձակ դաշնադրութեան մէջ Օսմ.
կայսրութեան փրկութեան միջոցները:

Արևելքի այս նոր Սահմանագրու-
թեան (Charte) — մասնաւորապէս Հայաս-
տանի բարենորոգումները գծող Յըրդ-
յօդուածին — շատ մ'էական տրամա-
դրութիւններն այնպէս երեսի վրայ
ձգուած մնալէն ծագեցան բոլոր այն
աղէտները, որոնցմով տառապեցան
անկէց 'ի վեր Սուլթանին հպատակ-
ները և որուն հակահարուածը կրեց
Եւրոպան: Հայկական ջարդերուն ահ-
ուելիանակնկալին վաղորդայնը՝ նշմար-
ուեցաւ այս ճմարտութիւնը փայլակի
մը պէս, ու Մայիսի Յիշատակագիրը
Տէրութեանց տեսակ մը զղջական դար-
ձըն եղաւ դէպ 'ի միակ փրկարար քա-
ղաքականութիւնը: Ու դարձեալ մո-
ուացումը վրայ եկաւ նստաւ:


Այսօր եւրոպական տէրութիւն-
ներն իրենց առջև տեսակ մը պայմա-
նաժամ ունին այս սխալին հետեւանքը
դարմանելու համար: Բովանդակ Արե-
ւելքի մէջ իրենց այսքան յուսախա-
բութեանց հակառակ, ազգերը դեռ
չ'են կորուսած դարաւոր սովորութիւնը՝
Ֆրանսային դարձնելու աչքերնին ինչ-
պէս կը դարձնեն դերագոյն ապաւէնի
մը, ու կը յուսան թէ՛ միջազգային
հաւասարակշռութիւնն երաշխաւորող
մտերմութեան այս նոր ցոյցերը,
երկու բարեկամ ու դաշնակից տէրու-
թեանց լիակատար ու ամբողջական
համաձայնութեան անուսով, կը յան-
գին Սուլթանին վրայ 'ի գործ գնելու
ճնշում մը, առանց որու այս իշխանը
բան մը չ'պիտի ընէ Հայաստանի մէջ

նոր պայթումի մ'առաջքն առնելու համար:

Ու դիւանադիտութիւնն ալ պէտք չէ անտեսել թէ՛ շարդերը, որոնց առջև ամեն մարդկային խիղճ պիտի ընդվզի վերջապէս, կրնան ծնիլ վրիժառութիւններ, որոնք ամենէն աւելի կ'զբաղեցնեն իրապաշտ քաղաքագէտներուն քիչ մը սափակ խոհեմութիւնը:



ԵՐԲԷՔ ՊԻՏԻ ԶՍՊԱՆՆԵ՛Ք



(Շար. ԻԱ. քիւեհ եւ վերջ)

Գ.

Ուրեմն ինչո՞ւ սպաննել զանոնք: Արքայասպանութիւնը միջոց մը չը կրնար ըլլալ ժողովուրդներուն զբոհանքները ջնջելու, մարդկային կեանքերը հնձող պատերազմներուն վերջ մը դնելու: Հարեանցի միտք մը միայն կրնայ այլապէս մտածել: Միշտ եղած են պատերազմներ ու հարստահարութիւններ, ո՞վ որ ալ գրտնուէր գերագոյն իշխանութեան գլուխը. Նիկիոյ կամ Աղեքսանդր, Փրէտերիկ կամ Գիլյոս, Լուի կամ Նաբոլէօն, Բալմբրսթըն կամ Կլատսթօն, Մաքֆինլի կամ ուրիշ մը: Ու դիւրին է հասկնալ թէ՛ ո՛չ այս անհատն է ո՛չ ալ միւսը՝ որ կը վառէ այս պատերազմները եւ կը հնարաւորէ ազգերը տառապեցնող ճնշումները: Մարդկութեան ազէտները չ'են գար սոսկական անձերէ, այլ ընկերութեան կազմակերպութենէն, բոլոր մարդիկ իրարու կապող եղանակէն, որով անոնք մէկ քանիներու կամ յաճախ միայն մէկ հատի իշխանութեան տակ կ'ըլլան:

Քանի մ'անձնաւորութեանց այս արտակարգ կացութիւնը, իշխանութեան այս ծայրայեղութիւնը որ ասոնց ձեռքին մէջ կը դնէ կեանքն ու բազմը հազարաւոր մարդկան, ազգե-

րու պետերը կը պահէ շարունակ մեղկ ու թոյլ վիճակի մը մէջ. ասոնք մեծամոլութեան աւելի կամ նուազ բարձր աստիճանին հասած են և իրենց ամբարձումն անգամ, ու իրենց բացառիկ պայմանը՝ կ'արգիլեն իրենց տեսնելու իրենց հիւանդութիւնը: Ասկէց զատ, վեհապետները, իրենց մատղաշ հասակէն սկսեալ մինչև իրենց վերջին ժամը՝ չըջապատուած են ամենէն աւելի անլուր զուգով ու կ'ապրին լոկ սուտերու եւ շողմանքի մթնոլորտի մը մէջ: Բոլոր իրենց դաստիարակութիւնը, բոլոր իրենց մտածումները, բոլոր իրենց էութիւնը կը կեդրոնանան միակ կէտի մը վրայ, այն է պատերազմին, այսինքն անցեալ ժամանակներուն մարդասպանութեանը, եւ մեր ժամանակին մէջ մարդասպանութիւն գործելու լաւագոյն միջոցներուն ու ասոնց հանդերձանքներն ապահովելու լաւագոյն եղանակներուն ուսումին: Իրենց տղայ տարիքէն կը կրթուին այսպէս ամեն ձևերու տակ սպաննելու արուեստին մէջ, երբէք չ'են ձեռքէ ձգեր սպաննիչ զէնքերը. սուր, դաշոյն, ցուցամոլութեամբ մը կը կրեն զինուորական համազգեստները. ներկայ կը գտնուին ու կը նախագահեն հանդէսներուն, ցոյցերուն, մարզանքներուն. այցելութիւն կ'առնեն կուտան. կաշգաւ իրարու կը նուիրեն շքանշաններ, զօրագնդեր, ու, ո՛չ միայն մէկը չը կրնար իրենց այս կերպ ըրած բանին բուն անունը տալ, մէկը պիտի չ'ըսէ թէ՛ իրենց պարապելը սպաննելու միջոցներով, իրենց զբաղելը՝ այս կիրքով՝ ամօթ է ու ոճիր, այլ ընդհակառակն, ամեն տեղ ուր կը ներկայանան, կը լսեն լոկ հիացման ազաղակներ, կեցցէ՛ներ, պրալօ՛ներ, իրենց արարքներուն խանդավառ հաւանութիւններ:

Ամեն տեղ իրենց անցքին վրայ, հանդէսներուն, տօներուն, իշխանա-

կան կամ պաշտօնական ճամբորդութեանց մէջ, ամբողջ կը վազէ, ցնծածայն կողմունէ զանոնք յաղթանակաւ։ Կը կարծեն թէ՛ բովանդակ ժողովո՛ւրդն է որ այսպէս իր գոհունակութիւնը կը յայտնէ իրենց։ Միակ լրագիրները զոր կը կարդան կամ իրենց թոյլ կը տրուի տեսնել, կը թուին թարգմանել իրենց ամբողջ ժողովուրդի մը կամ անոր լաւագոյն ներկայացուցիչներուն զգացումները, ու այս ստրուկ մամուլը կը վաւժակէ անոնց խօսքերն ու արարքներն առանց խպնելու, նոյն իսկ եթէ այդ խօսքերը տխմար ու արարքները գէշ ըլլային։

Արք, կանայք, քահանայք, աշխարհականք, ամեն անոնք որ կը շրջապատեն զիրենք, ուրացած են ամեն մարդկային արժանապատուութիւն, միակ նպատակով մը, որ է զիրար գերազանցել երեսպաշտութեան մէջ, թագաւորաց, կայսերաց, նախագահներուն աչքերը գոցել, զանոնք խաբել, ու զրկել իրերուն իրականութիւնը ճանչնալու ամեն հնարաւորութենէ։ Այս վեհապետները հարիւր տարի ալ ապրին, իրօք ազատ մարդ մը բնաւ պիտի չ'տեսնեն ու իսկական ճշմարտութիւն մը բնաւ պիտի չ'լսեն։ Կահարեկիս, երբեմն լսելով անոնց խօսքերը, դիտելով վեհապետներուն արարքները, և սակայն կը բաւէ խորհիլ անոնց կացութեան վրայ՝ համոզուելու համար թէ անոնց տեղ՝ ուրիշ ամեն մարդայնպէս պիտի ընէր։

Երկրի մը գլուխը գտնուող ո՛ր և է իմաստուն մարդ այս պայմաններու մէջ, չ'պիտի կրնայ ընել բայց միայն այս խելացի որոշումը. հրաժարիլ իշխանութենէն։ Բայց ո՛վ որ կը մնայ հոն, ճակատագրապէս կը մղուի ընել այդ վեհապետներուն պէս։

Դ.

Արդեօք ի՞նչ կ'անցնի ըզեզին մէջ

այսպիսի փառասէր վեհապետի մը, որուն միակ մտատիպարն է ենթապաշտօնէինը (sous-off) և որուն շրթունքէն կամ գրչէն ինկած մէն մի բառը կ'ողջունեն անագին օ՛շ (hoch) ով մը. մինչդեռ ամբողջ աշխարհին մամուլը երկարօրէն կը մեկնաբանէ անոր ըսածը, կարծես թէ խիստ կարևոր բան մ'եղած ըլլար այն։ Անի պիտի ըսէ թէ՛ իր կամքովը զօրքը պէտք է հպատակի կարգապահութեան, մինչև անգամ, եթէ իրեն հրամայուի, ի՛ր իսկ հայրը սպաննելու աստիճան. ու պիտի գոչեն. հուրրա՛ւ...։ Անի պիտի ըսէ թէ՛ պէտք է քարոզել Աւետարանը շղթաներով. հուրրա՛ւ։ Անի պիտի ըսէ թէ՛ Չինու մէջ զօրագնդերը պարտին ո՛չ թէ գերի բռնել, այլ անխնայ բնավիճակ ընել. հուրրա՛ւ։ Ու իր գնդերը ճամբայ կ'իյնան դէպ ի Չինաստան, անոր հնազանդելու համար կէտ առ կէտ. ուրիշ մը, ի բնէ բարի, միտումով գլխաւ, մարդասիրութեան սիրոյն համար խաղաասէր, չը պիտի վարանի մասնակցելու մարտաշունչ միջոցներու, որոնք անհաշտելի են տիեզերական խաղաղութեան ծրագիրներու հետ։ Արդեօք ի՞նչ կ'անցնի, կը կրկնեմ, այս մարդոց գանկին ու սրտին մէջ։

Ե.

Ո՛չ, ազգերու զրկանաց ու ստերազմի դաշտերուն վրայ մարդասպանութեանց ճշմարիտ յանցաւորները չեն, ո՛չ Աղեքսանդրներ, ո՛չ Ումպէրթօներ, ո՛չ Վիլհէլմներ, ո՛չ Նիկօլաններ, ո՛չ ալ Չէմպըրլէններ։

Այս պատճառաւ պէտք չէ, և ո՛չ մէկ պատրուակով, սպաննել ո՛չ Աղեքսանդրները, ո՛չ Գառնօները, ո՛չ Ումպէրթօները, ո՛չ Վիլհէլմները, ո՛չ Նիկօլանները, այլ պէտք է բարւոքել կառոյցը, որուն պսակն է անոնց իշխանութիւնը։ Արդ, ընկերութեան արդի շէնքը բռնողը՝ խելագարութիւնն

ու եսամոլութիւնն է մարդոց, որոնք կը ծախեն իրենց ազատութիւնն ու պատիւը նիւթական օգուտներու փոխարէն :

Սանդուխին վարը գտնուող մարդիկ, մէկ կողմէ, հայրենասիրական դաստիարակութեան ու կրօնային խաբէութեան յիմարութեանը շնորհիւ, միւս կողմէ, շնորհիւ իրենց ցանկացած անձնական օգուտներուն, ամեն բան կը զոհեն ի նպաստ անոնց որ իրենցմէ վեր են ու իրենց կը խոստանան կամ կ'առաջարկեն քանի մը շնորհներ : Նոյն բանը կ'ընեն նաև անոնք որ քիչ մը աւելի բարձր են ու միևնոյն յոյսով կ'ընեն միևնոյն զոհողութիւնները : Նմանապէս անոնք որ ա'լ աւելի բարձր են, միևնոյն ճամբան կը բռնեն :

Ու այսպէս, մերձաւորէ մերձաւոր մինչև արջ կամ անոնք որ կը դրաւեն բուրդին գագաթը, և որոնք իրենց գործունէութեան համար ուրիշէ չ'են խրատուիր, բայց եթէ իրենց ունայնամտութենէն ու իշխելու տենչէն :

Ազգերն իսկ, զոհելով իրենց արժանապատուութիւնը որ և է օգուտներու, կը ծնին այս մարդիկները, որ իրենց ըրածէն տարբեր կերպով չ'են կրնար վարուիլ, և որոնց գէմ կը դրդուուիս, անոնց արարքներն անզգայ ու անգութ դաւանելով :

2.

Այս մարդիկը սպաննել՝ ըսել է ընել անոնց պէս որոնք տղաքները շփացնելէ յետոյ, կը խարազաւեն զանոնք :

Որպէ՛ս զի ա'լ գոյութիւն չ'ունենան ազգերու հալածանքն ու անարդար պատերազմները. որպէս զի ո'չ ոք ընդվիտ անոնց գէմ որոնք յանցաւոր կը համարուին, որպէս զի ա'լ չըլլան արքայասպանութիւնք, մէթոս մը միայն կայ ու պարզ է :

Թո՛ղ մարդիկ հասկնան իրերն


ինչպէս են և զանոնք իրենց բուն անունովը յորջորջեն. թող գիտնան թէ՛ բանակը պատերազմ կոչուած միահազոյն գործիքն է լիկ. թէ՛ զինուորագրութիւնն ու վարչութիւնը բանակներուն, որոնցմով ա'յնքան հպարտօրէն կը պարապին թագաւորները, կայսրները, հանրապետական նախագահները, այսօր ուրիշ բան չ'են եթէ ո'չ սպաննութեան հանդերձանքներ : Թո՛ղ իւրաքանչիւր թագաւոր, կայսր, նախագահ համուզի թէ՛ բանակներու կազմակերպչի իր գերը՝ չէ՛ ո'չ պարկեշտ, ո'չ ալ կարևոր, ինչպէս որ իր շողոմարարները կ'ըսեն իրեն. այլ թէ ընդհակառակն վատ ու ամօթապարտ գործ մ'է, ինչպէս է ամեն սպաննութեան կանխամտածում :

Հետևութիւն. պէտք չէ, ո'չ մէկ պարագայի մէջ, սպաննել ո'չ Ալեքսանդր, ո'չ Գարնօ, ո'չ մլմպէրթօ, ոչ ուրիշները, բայց պէտք է միաբանել անոնց ընդունել տալու այս կարծիքը թէ՛ իրենք իրաւունք չ'ունին սպաննելու, պատերազմ ընելով :

Եթէ մարդիկ դարձեալ այս ճամբան չը բռնեն, ըսել է թէ՛ իրնոսացած կը մնան, և թէ՛ կառավարութիւնը, ինքզինք պահպանելու համար, զանոնք այս վիճակի մէջ կը ձգէ :

Գարձեալ միակ միջոց մը կայ արդիւնելու թագաւորներն ու զիրար սպաննելը պատերազմի դաշտերուն վրայ. զանոնք իրենց թմբիբէն ու իրենց իրնոսացած վիճակէն հանելն է. ու այս է զոր կը ջանամ ընել այս տղերը հրատարակելով :

ԼԷՈՆ ԴՕԼՍԹՕՅ



SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԸՐ

Ապահովագրական Ընկերութիւն
ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանգ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդգշտուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Մովային, Գետային և Ցամաքային փոխադրութեանց արկածներու դէմ.

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Գիւնը առ Ընդհանուր Գործակալ եւ Լիւսգոր-Փոխակնոյր

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆՍ

Աղեփսանորիս, պզտիկ Մէնչիե Ապուսարսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Մովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանգ

ԴԵՂԱՐԱՆ

ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Աոյն միամեայ հաստատութիւնը վերջերս աւելի ճոխացուցած ենք բերել տալով եւրոպական ամեն տեսակ ընտիր դեղորայք, սրէսխաշիթներ եւ հանքային թարմ շուրեր:

Յաճախորդները կրնան ապահով ըլլալ դեղերուն խնամեալ եւ արագ պատրաստութեան ու գիններու չափաւորութեան մասին:

Գեղարանս կը յաճախեն Հայ եւ օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու փորձ մանկաբարձներ:

ԳԷՈՐԳ ԹՕԳԱԹԵԱՆ

ԿԱՇԵՂԻՆԱՑ ՅԱՐԴԱՐԻՉ (Tapissier)

Քաղաքիս երեւելի հայ տուններուն ծանօթ յաճախորդ, կը պատրաստէ

դոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վարագոյր, ևն:

Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին:

Դիմել Հայկ. Մեծ Սրճարանը:

ԿԱԹՆԱՏՈՒՆ - ՃԱՇԱՐԱՆ

ՆՈՐ ԴԱՐ

Այս նոր բացուած ճաշարանին առաւելութիւններն են. ծովեղերեայ օդ, ամենամաքուր սպաս, և խնամեալ սպասարկութիւն, — ինչ որ կը փնտռուի յաճախ ուրիշ ճաշարանաց մէջ: —

Կերակուրները պոլսական ճաշակով պատրաստուած, իրենց համեղ ու այլազան հանգամանքներով արժանի են ամենապահանջկոտ քիմքերու գնահատման:

Դիմեցէ՛ք նոր Դարի ճաշարանը, Ապու Չատըր փողոցին մէջ, Ղազարեան Եղբարի Վաճառատան դիմաց. գնացէ՛ք, ճաշահեցէ՛ք եւ տեսէ՛ք: